ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.02.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/24

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ ոստիկանության զորքեր

Մասնակից՝ «Էլիտ Էսվե» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

«Էլիտ Էսվե» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Ա. Կիրակոսյանի և Էդ. Մկրտչյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԱՊՁԲ-20/6/Բ/1/ԱԾ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, ավտոպահեստամասերի ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԱՊՁԲ-20/6/Բ/1/ԱԾ-13»:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 30.01.2021թ.-ի թիվ 26/26/1139-2021 գրությամբ «Էլիտ Էսվե» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ոստիկանության զորքերի 26.01.2021թ.-ի թիվ 3/4/3703-21 գրության հիման վրա, 30.01.2021թ.-ին «Էլիտ Էսվե» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 30.01.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի կողմից 01.02.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/24 համարի ծածկագիրը:

10.02.2021թ.-ին և 26.02.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 10.02.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 26.02.2021թ.-ին:

2. ՀՀ ոստիկանության զորքերի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ ոստիկանության զորքերը 26.01.2021թ. թիվ 3/4/3703-21 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ ՀՀ ոստիկանության զորքերի և «ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ-ի միջև 25.12.2019թ-ին կնքված թիվ «ՀՀ ԿԱ ՈՋ ԳՀԱՊՁԲ-20/6/Բ/1/ԱԾ-13» ծածկագրով ավտոպահեստամասերի ձեռքբերման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում «ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ-ն ստանձնած պարտավորությունները կատարել է ոչ պատշաճ՝ մատակարարման ժամկետները խախտել է 15 օրից ավելի:

Ելնելով վերոգրյալից խնդրում ենք Ձեզ միջոցներ ձեռնարկել նշված մասնակցին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու գործընթաց նախաձեռնելու համար:»:

3. <u>«Էլիտ Էսվե» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 30.01.2021թ.-ի գրությամբ դիմել է «Էլիտ Էսվե» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.01.2021թ.-ի թիվ 26/26/1139-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է 10.02.2021թ.-ին հրավիրված նիստին, ներկայացրել է բանավոր դիրքորոշում՝ անդրադարձ կատարելով «ՀՀ ԿԱ ՈՋ ԳՀԱՊՁԲ-20/6/Բ/1/ԱԾ» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Էլիտ Էսվե» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի հիմքերին:

4. <u>ՍՑ-LO-2021/24 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ ոստիկանության զորքերի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Էլիտ Էսվե» ՍՊԸ-ի միջև 25.12.2019թ.-ին կնքվել է թիվ «ՀՀ ԿԱ ՈՋ ԳՀԱՊՁԲ-20/6/Բ/1/ԱԾ-13» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պատվիրատուի և «Էլիտ Էսվե» ՍՊԸ-ի միջև 09.03.2020թ.-ին կնքվել է թիվ «ՀՀ ԿԱ ՈՋ ԳՀԱՊՁԲ-20/6/Բ/1/ԱԾ-13» ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 1 Համաձայնագիրը (այսուհետ նաև՝ Համաձայնագիր):

iii. Համաձայնագրին կից սահմանվել է թիվ 1 հավելվածը՝ վճարման ժամանակացույցը:

iv. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 25.01.2021թ.-ին հրապարակված Պայմանագրի

միակողմանի լուծման մասին 25.01.2021թ.-ի թիվ 4/44 ծանուցման համաձայն՝ ՀՀ ոստիկանության զորքերի և «Էլիտ Էսվե» ՍՊԸ-ի միջև 25.12.2019թ.-ին կնքված թիվ «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԱՊՁԲ-20/6/Բ/1/ԱԾ-13» ծածկագրով՝ ավտոպահեստամասերի ձեռքբերման պայմանագրի շրջանակներում «Էլիտ Էսվե» ՍՊԸ-ն ստանձնած պարտավորությունները կատարել է ոչ պատշաճ՝ մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը, ընդ որում Պայմանագրի նույն կետի «բ» ենթակետի համաձայն՝ Պայմանագիրը համարվում է էականորեն խախտված, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման թիվ 1 հավելվածի 33-րդ կետի 16-րդ ենթակետը և Պայմանագրի 8.9-րդ կետը՝ Պատվիրատուն 2021թ.-ի հունվարի 25-ին միակողմանի լուծել է ՀՀ ոստիկանության զորքերի և «Էլիտ Էսվե» ՍՊԸ-ի միջև 25.12.2019թ-ին կնքված թիվ «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԱՊՁԲ-20/6/Բ/1/ԱԾ-13» ծածկագրով պայմանագիրը:

v. ՀՀ ոստիկանության զորքերի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետով սահմանված կարգով ուղարկված փաստաթղթերում առկա չէ Պատվիրատուի և «Էլիտ Էսվե» ՍՊԸ-ի միջև 25.12.2019թ.-ին կնքված թիվ «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԱՊՁԲ-20/6/Բ/1/ԱԾ-13» ծածկագրով պետական գնման պայամանգրի անբաժանելի մաս կազմող՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը:

vi. www.armeps.am/ppcm կայքի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ՀՀ ոստիկանության զորքերի և «Էլիտ Էսվե» ՍՊԸ-ի միջև 25.12.2019թ.-ին կնքված թիվ «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԱՊՁԲ-20/6/Բ/1/ԱԾ-13» ծածկագրով գնման պայմանագրում և 09.03.2020թ.-ին կնքված թիվ 1 համաձայնագրում նույնպես առկա չէ պայմանագրի անբաժանելի մաս կազմող՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը:

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների

նախարարության կողմից 30.01.2021թ.-ի թիվ 26/26/1139-2021 գրությամբ «Էլիտ Էսվե» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա

դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.1 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Պայմանագրի 6.1 կետի համաձայն՝ Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

ՀՀ ոստիկանության զորքերի կողմից ավտոպահեստամասերի ձեռքբերման նպատակով 19.11.2019թ.-ին հայտարարված «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԱՊՁԲ-20/6/Բ/1/ԱԾ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 1.1-րդ կետի համաձայն՝ Ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են կնքվելիք պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի թիվ 6 հավելվածում:

Հրավերի թիվ 6 հավելվածով սահմանված՝ պայմանագրի նախագծի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել են ապրանքների մատակարարման քանակները, ժամկետները և այլն:

Պայմանագրի 8.11-րդ կետի և Հրավերի 8.13-րդ կետի համաձայն՝ Պայմանագիրը կազմված է 8 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր

իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի թիվ 1, թիվ 2, թիվ 3 և թիվ 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ ոստիկանության զորքերի և «Էլիտ Էսվե» ՍՊԸ-ի միջև 25.12.2019թ.-ին կնքվել է թիվ «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԱՊՁԲ-20/6/Բ/1/ԱԾ-13» ծածկագրով պետական գնման պայմանագիրը, իսկ 09.03.2020թ.-ին կնքվել է Պայմանագրի թիվ 1 Համաձայնագիրը՝ սահմանվելով թիվ 1 հավելվածը՝ վճարման ժամանակացույցը:

www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 25.01.2021թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին 25.01.2021թ.-ի թիվ 4/44 ծանուցման համաձայն՝ ՀՀ ոստիկանության զորքերի և «Էլիտ Էսվե» ՍՊԸ-ի միջև 25.12.2019թ.-ին կնքված թիվ «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԱՊՁԲ-20/6/Բ/1/ԱԾ-13» ծածկագրով՝ ավտոպահեստամասերի ձեռքբերման պայմանագրի շրջանակներում «Էլիտ Էսվե» ՍՊԸ-ն ստանձնած պարտավորությունները կատարել է ոչ պատշաճ՝ մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի, ինչով պայմանավորված, Պատվիրատուն հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման թիվ 1 հավելվածի 33-րդ կետի 16-րդ ենթակետը և Պայմանագրի 8.9-րդ կետը՝ 2021թ.-ի հունվարի 25-ին միակողմանի լուծել է ՀՀ ոստիկանության զորքերի և «Էլիտ Էսվե» ՍՊԸ-ի միջև 25.12.2019թ-ին կնքված թիվ «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԱՊՁԲ-20/6/Բ/1/ԱԾ-13» ծածկագրով պայմանագիրը:

ՀՀ ոստիկանության զորքերի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետով սահմանված կարգով ուղարկված փաստաթղթերում առկա չէ Պատվիրատուի և «Էլիտ Էսվե» ՍՊԸ-ի միջև 25.12.2019թ.-ին կնքված թիվ «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԱՊՁԲ-20/6/Բ/1/ԱԾ-13» ծածկագրով պետական գնման պայամանգրի անբաժանելի մաս կազմող՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը: Ինչպես նաև www.armeps.am/ppcm կայքի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ՀՀ ոստիկանության զորքերի և «Էլիտ Էսվե» ՍՊԸ-ի միջև 25.12.2019թ.-ին կնքված թիվ «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԱՊՁԲ-20/6/Բ/1/ԱԾ-13» ծածկագրով գնման պայմանագրում և 09.03.2020թ.-ին կնքված թիվ 1 համաձայնագրում նույնպես առկա չէ պայմանագրի անբաժանելի մաս կազմող՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ, Պատվիրատուի կողմից Կարգի 45-րդ կետով սահմանված հիմքերը թերի ներկայացնելու պարագայում հնարավոր չէ արձանագրել Մասնակցի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ոչ պատշաճ կատարումը՝ մատակարարման ժամկետների խախտման փաստը, քանի որ առկա չէ ՀՀ ոստիկանության զորքերի և «Էլիտ Էսվե» ՍՊԸ-ի միջև 25.12.2019թ.-ին կնքված թիվ «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԱՊՁԲ-20/6/Բ/1/ԱԾ-13» ծածկագրով պետական գնման պայմանագրի անբաժանելի մաս կազմող՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պայմանագրի անբաժանելի մաս կազմող տեխնիկական բնութագիր-գնման ժամանակայցույցի առկայության պայմաններում միայն հնարավոր կլիներ փաստել Մասնակցի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ոչ պատշաճ կատարումը՝ մատակարարման ժամկետների խախտման փաստը և դրանից հետո նոր միայն, ըստ էության, անդրադառնալ Պատվիրատուի կողմից ներկայացված

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված համապատասխան հիմքերի օրինաչափությանը:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.01.2021թ. թիվ 26/26/1139-2021 գրությամբ «Էլիտ Էսվե» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/24 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**